

# Իրավունք

## մշակույթ

Հիմնադրվել է 2007 թ. օգոստոսի 30-ին  
www.acrpc.am  
Ընկերության գրասենյակը  
Երևան, Կոմիտասի պողոտա, 11/14  
ibici societas ibi ius

Երկշաբաթեր  
թիվ 11 (14)  
2007 թ. սեպտեմբերի 30

### ԱՆՊՍԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՐԿԵՍՏՈՒՄ

#### ՉԱՓՈՐՈՇԻՉ ՉԷ

2007 թ. մայիսի անփառունակ պրեմիերայից հետո սեպտեմբերի երկրորդ կեսին հանրային հեռուստատեսության առաջին ալիքով կրկին ցուցադրվեց «Մի վախեցիր» հինգ մասից բաղկացած շարժանկարը:

Հարց է ծագում. ինչու՞, նրա ո՞ր արժանիքի, ուսանելի ո՞ր դասի, հայրենասիրության, քաղաքացիական ինքնագիտակցության զարգացմանը նպաստող ո՞ր որվագների համար...

Մարդկային անկապտելի իրավունքների թվում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ներառում է որևէ միջամտությունից ու ունեցությունից անհատի անձնական ու ընտանեկան կյանքի, պատվի ու արժանապատվության պաշտպանության իրավունքը (հոդված 12): Սակայն, այսօր յուրաքանչյուր բնակարանում տեղադրված հեռուստացույցի միջոցով շարունակաբար ու անպատիժ ունեցողները են ընտանիքի, անհատի պատվին ու արժանապատվությունը՝ խարխիլելով ազգային ավանդույթներն ու քրիստոնեական բարոյականության նորմերը, կործանարար ներգործություն ունենալով աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործի վրա:

Տարիներ շարունակ որոշ «գործարարներ» այլոց «թողարկած» թափոնները՝ հայրատախառն պատկերները, անառական խոտան թարգմանությունները նույն հեռուստացույց խողովակով անպատիժ ներարկում են մեր բնակարաններն ու թունավորում հասարակությունը՝ դերևելով, ի չիք դարձնելով կրթության ու դաստիարակության ոլորտում իրականացվող ծրագրերը, միջոցներն ու ջանքերը: Եվ հիմա, երբ հասարակությունը բավական «վարժեցվել» է այդ «մշակույթին», մենք պահանջ ենք դառնում մեր սեփական «արտադրանքին»:

Շարժանկարը հանցավորությունը, իրավախախտումը, պետականության ձևավորման գործընթացի բացասական դրսևորումները՝ իրավապահ մարմինների սերտաճուն քրեական տարրերի հետ ու ռսի, անիրավության մթնոլորտը ներկայացնելով, փաստացի խրախուսում է դրանք: Օրինակ, զինվորական զենքալը հայիոյախառն հեռախոսազրույցից հետո առանց որևէ դատի, որոշման կամ հրամանի կալանավորից դուրս է բերում իրավախախտում կատարած հրամանատարին... Այո, ցավոք, այդպես էլ է եղել, բայց չէ՞ որ եղել են նաև, և բարեբախտաբար, առավելապես եղել են առողջ գործընթացներ ու օրինակներ, իրավախախտ որոշումներ ու գործողություններ: Եվ վերջապես, մի՞թե դա է եղել և է բնորոշը, մի՞թե անիրավությունը, անօրենությունն է դրականը, որ այսօր, երկրորդ անգամ ցուցադրվում է հանրայինի առաջին ալիքով... Դժվար է պատկերացնել հայոց պետականության վերականգնման նորագույն պատմության ավելի մեծ նենգափոխում, որպիսին «Մի վախեցիր» շարժանկարն է:

Ինչու՞ է գլխավոր դերում քրեական հանցագործի կերպարն ընտրվել. մի՞թե մեր անկախության այս փոքրիկ պատերազմում այլ օրինակներ չունենեք... Մեր ո՞ր գորավարն է հանցագործ աշխարհից սերել. Կարդան Մամիկոնյանը, Դավիթ Բե՛կը, Լիկոլ Դումանը, Գարեգին Նժդե՛հը, թե՛ Անդրանիկը:

Դարձյալ՝ հայիոյել գիտեն շատերը. բայց մի՞թե դա է բնորոշը մեզ համար: Մի՞թե դա է այսօրվա հայ մտավորականի ընտանիքը, մի՞թե դա է Արցախի ազատագրած զինվորի կերպարը: Մի՞թե Սովսես Գորգիսյանը, Մոնթե Մելքոնյանը, Թաթուլ Կրպեյանը, Սամվել Շահնուրադյանը, Նորիկ Մուրադյանը, այդպես կանչով ելան ու կյանքը Հայրենիքին նվիրած մեր հազարավոր նահատակներն այդպիսին են եղել: Ոչ, և բնավ ոչ: Մեր դասականները՝ Բա՛ֆին, Դեմիրճյանը, Զորյանը, Խանգաղյանը մի ողջ սերունդ դաստիարակած իրենց պատմավեպերում ի՞նչ լեզվով են խոսեցնում իրենց հերոսներին՝ իշխաններին, նախարարներին, զորավարներին, շինականներին ու զինվորներին...

Կունենայի՞նք արդյոք Արցախյան պատերազմում հաղթած հերոսներին, Եթե դասականները հայիոյանքներ դնեին իրենց հերոսների շուրթերին... Այս իմաստով, Արցախյան պատերազմի հերոսներին ճնել,

### Սր. ՆԵՐՍԵՍ ԶՆՈՐԴԱԼԻ

«Դարձեալ՝ ձեր լեզուն սատանայի գործիքի մի՛ վերածե՛ք՝ չար և դառը հայիոյանքներով, մանաաւո՛ղ՝ որոնցով անարգում է թե՛ հավատը, թե՛ ձոգին, թե՛ Ասազանի մկրտութիւնը, թե՛ մկրտիչ քահանան, թե՛ անձը և թե՛ բերանը...»

Ձեր մանուկներին Աստուծոյ երկիւղով սնուցե՛ք՝ խրատելով Նրանց, որ մանուկ տարիքից լինեն Աստուածասէր, ողորմած եւ աղօթասէր: Աղօթք սովորեցրէք Նրանց եւ սաստեցե՛ք, որ աղտոտ խոսքեր և հայիոյանքներ չսովորեն...»

Կերտել են հենց Բա՛ֆին, Դեմիրճյանը, Զորյանը, Խանգաղյանը... Դու՞ք ինչ եք ծնելու ձեր չարախորհուրդ արտադրանքով...

Ո՞րն է արվեստի ու մշակույթի դերը. Գեղեցիկով ու Բարիով կրթել ու դաստիարակել մատաղ սերունդը, զարգացնել մշակույթը: Գուցե շարժանկարի հեղինակները ինչ-որ նորահայտ «ճեղ-ճեղախոսական» ուղղությամբ են դավաճում: Ոչ դե չի ժխտում Բարու դեմ ապստամբած չարի գոյությունը: Խնդիրն այն է, թե ո՞րն եք դուք ընտրում և ինչու՞ եք սնում հասարակությանը, մեր մանուկներին: Եթե դուք չարն եք կերամակրում, ուրեմն դա եք ընդօրինակելի համարում...

Հավանաբար, որոշ մարդիկ կարծում են, թե եթերից, էկրանից կամ մամուլով հանդես գալու հաջողության գրավականն առավել անգուսպ, առավել անպատկառ ու առավել անբարտապան պահվածքն է... Մինչդեռ անպատկառությունն արվեստում չափորոշիչ չի կարող լինել: Հայիոյանքներով հագեցած այս փառաժեշտ շարժանկարն արվեստի հետ ի՞նչ անջուրթուն կարող է ունենալ, եթե այն իր ժպիտի ու անպատկառ տեսարաններով, եղծաշարք կերպարներով չարն է ի ցույց հանել... Եվ Մաշտոցին, Նարեկացուն ու Թումանյանին հաղորդակցվող երեխային ի՞նչ լավ բան կարող է տալ այդ եղևությունը՝ իր խթաբարձած բարքերով ու լեզվով:

Ես խղճացի որոշ շնորհալի դերասաններին, թեև նրանք նույնպես մեղադրելի են, որ այդքան թանկ գնով համաձայնել են կրան ելնել...

Համոզված եմ, որ շարժանկարի հեղինակները և հայիոյոլ դերասանները կամաչեն այն իրենց ընտանիքներում, իրենց կանանց, ջուրերի ու երեխաների հետ դիտելուց: Եվ այս դեպքում բոլորովին այլ հարց է ծագում. ո՞ր սպառողի համար է ստեղծվել այն... Արդյո՞ք այս ամենը հետևողականորեն իրականացվող ինչ-որ ծրագիր չէ՞ ուղղված մեր ազգային նվիրական արժեքների և, հետևաբար, նաև ազգային անվանականության դեմ: Եթե ոչ, ապա ինչու՞, ի՞նչ այն նպատակով է մեր ժողովրդի նկատմամբ այսպիսի չարագործություն կատարվում: Գուցե դա պարզապես անգիտության՝ հետևանք է: Տա՛ Աստված, որ այս չարյաց փոքրագույնը լինի:

Այս աշխատանքը կուտ է գնացել: Այն տիրաառչակ «Մեր բակը» խայտառակության արժանի շարունակությունն է, և նրա տեղը նույն արժանի գամբյուղն է, քանզի շարժանկարը վիրավորանք է յուրաքանչյուր իսկական արվեստագետի և յուրաքանչյուր պարկեշտ մարդու համար:

ԳԵՎՈՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

### Ա Յ Ս Հ Ա Մ Ա Ր Ո Ւ Մ

Միավորվենք հանուն կրթության իրավունքի .....	էջ 2
Շուրջօրյա ազատ խոսքի ասպարեզ .....	էջ 3
Սթափվենք, հարգենք և պաշտպանենք մեր իրավունքները .....	էջ 3
Գյուղական դպրոցը դասարանակազմության և իրավունքի թնջուկում .....	էջ 4
Պատվիրված որոշման հետևանքները .....	էջ 4
Գործում է երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագիրը .....	էջ 5
Ապօրինաբանություն. տարեկան քանի՞ միլիոն դրամի լրացուցիչ եկամտից է զրկվում երկիրը .....	էջ 6
Կարագա Սուրբ Խաչի պատմությունը .....	էջ 7
Փոստիկա կույսի և Եվախիսի մասին .....	էջ 7
Հայտարարություններ .....	էջ 8

# ՄԻԱՎՈՐՎԵՆՔ

հանուն կրթության իրավունքի



www.campaignforeducation.org

ՀԱՏԱՆԳՅԱԼՈՒՄ ԿՈՉ ՀԱՆՈՒՄ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ

Ամեն տարի Համընդհանուր կոչ հանուն կրթության քարոզարշավը հարուստ երկրների կառավարությունների պահանջում է պատասխան տալ կրթության վերաբերյալ իրենց տված խոստումների համար՝ օգտագործելով «Դպրոցական զեկույց»-ը՝ որպես նրանց կատարողականությունը պարզելու միջոց:

Ներքոբերյալ աղյուսակը ներկայացնում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության 22 առավել հարուստ երկրների դասակարգումն ըստ հետևյալ հինգ չափորոշիչների:

Յուրաքանչյուր երկրի, ըստ հինգ ցուցիչների, տրվել է առավելագույնը քսան միավոր, որոնց հանրագումարին համապատասխան տվյալ երկրին շնորհվել է վերջնական գնահատական ըստ այբուբենի Ա-Ձ տառերի:

Ա = 85-100, Բ = 70-84, Գ = 50-69, Դ = 30-49, Ե = 20-29, Զ = 0-19:

Կարգը	Երկիրը	Ցուցիչներ և միավորներ					Հանրագումարը	Գնահատականը (Ա-Զ)
		1. Միջազգայնորեն ընդունված չափի օգնության տրամադրում	2. Կրթության մատչելիության համար հատկացված մասնաբաժին	3. Աջակցություն «Արագ արձագանքման մեխանիզմներով»	4. Օգնության կենտրոնացում ամենաաղքատ երկրների վրա	5. Բարձրակարգ օգնության տրամադրում կրթությանը		
1-ին	Եգիպտոս	20	20	20	6	19	85	Ա
1-ին	Լորդեզիա	20	20	20	8	17	85	Ա
3-րդ	Դանիա	20	20	10	16	16	82	Բ
4-րդ	Միացյալ Թագավորություն	15	18	20	13	15	81	Բ
5-րդ	Լյուքսեմբուրգ	20	20	20	7	13	80	Բ
5-րդ	Եվեթիա	20	15	20	8	17	80	Բ
7-րդ	Իռլանդիա	15	17	20	10	17	79	Բ
8-րդ	Ֆինլանդիա	11	16	10	11	14	62	Գ
9-րդ	Կանադա	9	12	17	9	14	61	Գ
9-րդ	Նոր Զելանդիա	8	20	7	9	17	61	Գ
11-րդ	Բելգիա	14	10	12	10	12	58	Գ
12-րդ	Ֆրանսիա	13	12	6	2	10	43	Դ
13-րդ	Պորտուգալիա	6	5	5	11	14	41	Դ
14-րդ	Գերմանիա	10	8	5	3	11	37	Դ
14-րդ	Եվեյցարիա	11	6	3	8	9	37	Դ
16-րդ	Իսպանիա	9	7	6	0	13	35	Դ
17-րդ	Ճապոնիա	7	6	5	1	13	32	Դ
18-րդ	Ավստրալիա	9	7	0	2	9	27	Դ
19-րդ	Իտալիա	6	3	1	12	4	26	Ե
20-րդ	ԱՄՆ	5	4	1	8	8	21	Ե
21-րդ	Հունաստան	5	2	0	6	8	21	Ե
22-րդ	Ավստրիա	14	4	1	0	1	20	Ե



## Փաստաբանին շնորհվել է Նանսենի անվան մրցանակ

ԺՆԱ. սեպտեմբերի 18-ին ՄԱԿ-ի փախստականների գործակալության կողմից 37 տարեկան փաստաբան Կատրին Կամիլերին շնորհվել է 2007թ.-ի Նանսենի անվան մրցանակ, որը կազմում է շուրջ 100 հազ. դոլար, և որը տրվում է փախստականների շահերի պաշտպանության ոլորտում աչքի ընկած անհատներին կամ կազմակերպություններին:

Կատրինն անխնայ ցվածություն և աջակցություն է ցուցաբերել Մալթա ժամանած փախստականներին՝ անտեսելով սպառնացող վտանգները ներառյալ իր տան և ավտոմեքենայի իրկիզման բազմաթիվ փորձերը:

Մրցանակն անվանվել է նորվեգ բեռնախույզ Ֆրիտյոֆ Նանսենի անվամբ, որը 1921թ.-ին նշանակվել էր Փախստականների հարցերով առաջին գերագույն համաճարակաբան:

ՄԱԿ-ի ՓԳԳ մամուլ հարցորդություն

## Ընդունվեց բնիկ ժողովուրդների իրավունքների մասին ՄԱԿ-ի Հռչակագիրը

2007թ.-ի սեպտեմբերի 13-ին՝ ավելի քան երկու տասնամյակ տևած քննարկումներից հետո, ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովն ընդունեց բնիկ ժողովուրդների իրավունքների և նրանց հանդեպ խտրականության դրսևորման անթույլատրելիության մասին հռչակագիրը, որի օգտին քվեարկեցին 143 անդամ երկրներ, 11-ը մնացին ձեռնպահ, իսկ 4 երկրներ՝ Ավստրալիան, Կանադան, Նոր Զելանդիան և Միացյալ Նահանգները քվեարկեցին դեմ:

Հռչակագիրն ամրագրում է բնիկների անհատական և հավաքական իրավունքները՝ ներառյալ մշակույթի, ինքնության, լեզվի, աշխատանքի, առողջության, սեփական հաստատություններ հիմնելու և սովորույթների պահպանման վերաբերյալ:

Ըստ բնիկների հարցերով զբաղվող ՄԱԿ-ի մշտական ֆորումի աշխարհի 70 երկրներում հաշվվում են ավելի քան 370 միլիոն բնիկներ: Նրանք դիմակայում են խտրականության, ծայրահեղ աղքատության և իրավունքների խախտման այլ դրսևորումների հաճախ ներքաշվելով տարածքային վեճերի մեջ, վտանգելով իրենց կյանքը և զուրկ մնալով առողջապահական օգնությունից:

Սույն Հռչակագրի ընդունումը ողջունել են գլխավոր վեհաժողովի նախագահ Շեյխա Հայա Ռաշեդ Ալ Խալիֆան, գլխավոր քարտուղար Պան Կի Մունը և Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Լուիզ Արբորը:

ՄԱԿ-ի լրատվական ծառայություն

## Անգոլայի ոստիկանությունը գործում է օրինականության դաշտից դուրս

Ըստ Միջազգային համաձայնության կազմակերպության չնայած Անգոլայի ոստիկանության ծրագրում ներառված մարդու իրավունքների վերապատրաստման դասընթացներին, ոստիկանները շարունակում են խախտել մարդու իրավունքները, և հանցագործներից քելերն են կանգնում արդարադատության առջև:

«Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումները դարձրեցին միակ ճանապարհն է ոստիկանության աշխատողներին պատասխանատվության կանչել իրենց գործողությունների համար, օրենքին համապատասխան», - նշել է Անգոլայում Միջազգային համաձայնության կազմակերպության ներկայացուցիչը:

ՄԳ մամուլ հարցորդություն

# Մենք՝ քաղաքացիական շահարակույթյունը



ԺՈՒՆԱՎԻՍՏՆԵՐԻ «ԱՍՎԱՐԵՁ» ԱԿՈՒՄԲ

## Հ Ո Ւ Ր Զ Օ Ր Յ Ը Ը Զ Ը Տ Խ Ո Ս Ք Ի Ը Ս Պ Ը Ր Ե Զ

...Շմարտությունն ավելի քանկ է:



Ժ ու ճ ա լ ի ս տ ն եր ի «Ասպարեզ» ակումբի հիմնադրումը նախաձեռնել են լրագրողական և հեռուստառադիոարդյունաբերության մեջ որոշակի փորձառություն ունեցող մարդիկ՝ իրենց անձնական, աշխատանքային, դրամական և նյութական ներդրումներով:

Կազմակերպությունը ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցվել է 2000 թվականի փետրվարի 28-ին որպես հասարակական կազմակերպություն:

Կանոնադրական նպատակներն ու խնդիրներն են.

1. Ժուռնալիստների մասնագիտական իրավունքների և շահերի պաշտպանություն:
2. Խոսքի, տեղեկատվության, մամուլի, արտահայտվելու ազատության պաշտպանություն:
3. Ժուռնալիստիկայի և հարակից մասնագիտությունների (օպերատոր, խմբագիր, մոնտաժող, մեկնաբան, հաղորդավար, համակարգչային օպերատոր, թարգմանիչ) գծով հատուկ դասընթացների, փորձի փոխանակման կազմակերպում:
4. Ասուլիսների և բանավեճերի կազմակերպում:
5. Ժուռնալիստական և ՋԼՄ-ների աշխատանքների մրցույթների կազմակերպում:
6. Տեղի և հյուրընկալված ժուռնալիստներին տեղեկատվական, տեխնիկական և այլ աջակցություն:
7. Լրատվամիջոցների, հասարակական-քաղաքական, հասարակական կազմակերպութ-

յունների, իշխանությունների, նրանց ներկայացուցիչների աշխատանքի որակի, վարկանիշերի, հասարակական տրամադրությունների դիտարկումների, վերլուծությունների իրականացում:

8. Ժուռնալիստական Բարձրագույն դպրոցի և Պատանի ժուռնալիստների ուսումնական բազայի ստեղծում:

9. Օրենքով սահմանված կարգով, կազմակերպության նպատակների իրականացման ու դրված խնդիրների լուծմանն ուղղված գանգվածային լրատվամիջոցների ստեղծում:

10. Տեղեկատվական կենտրոնի և լրատվա-



Կան գործակալության ստեղծում:

11. Վերոբերյալ նպատակների իրականացմանն ուղղված հրատարակչական գործունեություն:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբն ստեղծվել է բոլոր կանցցողների ազատ արտահայտվելու հնարավորություն տալու ամենա-

զվազվոր նպատակով:

Ով մեկ անգամ գործ է ունեցել «Ասպարեզ» ակումբի հետ, գիտի, որ ցանկացած մարդ, անկախ քաղաքացիությունից, դավանանքից, ազգությունից, պաշտոնական կամ սոցիալական դիրքից, կարող է այնտեղ մամուլ առույթիս ունենալ և ազատ խոսել:

Ակումբի գործունեության ընթացքում տեղի են ունեցել մոտ 400 մամուլ առույթիսներ, 120 քննարկում-բանավեճեր: Այդ միջոցառումների համար ակումբն իր հնարավորությունները տրամադրել է անվճար և անհատապես:

Ակումբն անցած 5 տարիներին մոտ 40 անգամ Գյումրիում, Շիրակում, Վանաձորում և Լոռու մարզում անց է կացրել հանրային կարծիքի զանգվածային հարցումներ և հետազոտություն, որոնցով որոշակիացվել են ՋԼՄ-ների, իշխանությունների, հասարակական գործիչների վարկանիշերը, վարկանիշերի շարժերը, հանրության սպասելիքներն ու դժգոհությունները նրանցից:

Ակումբի հիմնադրման օրվանից նրա գլխավոր գրասենյակը գործել է շուրջօրյա:

Իր պատմության ընթացքում ակումբն իրականացրել է մոտ 25 զանազան ծրագրեր, որոնցից 9-ը՝ դրամաշնորհային օժանդակությամբ:

Տարբեր ժամանակահատվածներում, զանազան ծրագրերի իրականացման գործում ընդգրկվել են մինչև 6-45 աշխատող և մոտ 25 կամավոր:

(Ելույթը վեցված է ակումբի կայքէջից)

## Սթափվե՛նք, հարգե՛նք և պաշտպանե՛նք մեր իրավունքները

Մտածե՛ք մաև մեր որդու մասին...  
...դուք գնալու եք, իսկ նա գալու է:  
Պ. Սևակ

Ուզում են խոհերս կիսել առաջին հայացքից ամենը թվացող երթուղային միկրոավտոբուսների առնչությամբ:

Առավոտ կանոնի լավ տրամադրությամբ շտապում են աշխատանքի: Բայց արդեն քառասուն րոպեից ավելի է՝ չեն կարողանում նստել ինձ անհրաժեշտ երթուղային միկրոավտոբուս «գրեթեընթացության» պատճառով: Վերջապես որոշում են ինչ գնով էլ լինի բարձրանալ: Կիսով չափ վրդովված՝ մի կերպ խցկվում են: Բացված պատուհաններից քամին խառնում է հարդարված մազերս: Որոշում են խնդրել պատուհանները փակել, բայց նույն պահին ակոհոլի, քրտինքի և օծանելիքի ծակող հոտը քիթս է ընկնում, ու ես լռում եմ: Վարորդն զգուշացնում է, որ ամուր «բռնվե՛ք», քանզի դուռն անսարք է և ցնցումներից կարող է ցանկացած պահի բացվել: Այնքան են թեքված-կռացած կանգնել, որ տեղ հասնելով՝ դժվարությամբ են ուղղում ծոված մեջքս: Կոխկռտված ոտքերով, ճմռված հագուստով, խառնիխուռն մազերով շտապում են աշխատանքի: Այստեղ էլ գավեշտի երկրորդ մասն է սկսվում. փակել են բուհի դռները՝ անբարեխիղճ ուշացողներին պատժելու համար: Վերջապես դռները բացում են, որ դասախոսները ներս մտնեն:

Դասընթացում դասախոսները հավաքվում են անբիռնում և զրուցում տարբեր խնդիրներից: Նրանցից մեկը զուգուգու-վախեցած պատմում է իր տեսածը: Պարզվում է, որ առավոտյան երթուղային միկրոավտոբուսի անսարք դուռը շրջադարձի ժամանակ բացվել է, և երկու տարեկան մի երեխա ընկել է մոր գրկից: Բարեբախտաբար, հետևանքներն արետալի չեն եղել, բայց կարող էր և հակառակը լինել:



երթուղային միկրոավտոբուսներն անվերջ մրցակցության մեջ են մտնում, վազանց կատարում և կանգառներում կտրուկ արգելակում, իսկ ուղևորները, բառիս բուն իմաստով, միմյանց վրա են ընկնում: Եվ եթե ուղևորների մեջ հիլ կին լինի, պատկերացրե՛ք նրա վիճակը:

Ուղևորներն ուսանողներ են, աշխատավոր ժողովրդի ներկայացուցիչներ, մտավորականներ, ում ծայրն այսօր լսելի չէ չհիմովհիկներին: «Հարց լուծողները», այն է՝ որոշում կայացնողները երթեկնում են սեփական կամ պետական ավտոմեքենաներով:

Նրանք անհաղորդ են երթուղային տրամադրողով երթեկնելու մղձավաճից, մարդկային արժանապատվության «մանր-մուճր» ոտնահարումներից: Եվ կինը, աղքիկը զրկվում է իր կանացի դիմագծից՝ առաջին հայացքից ոչ մի կապ չունեցող երթուղային միկրոավտոբուսների պատճառով. պատճառի փեշերը ոտքի տակ են ընկնում, արդուզարդն այդ հրմշտոցի մեջ դառնում է ավելորդ ու անպետք: Ել չխոսեմք բարձրակրունկ կոշիկների ու զուգազուլպաների անհարմարության մասին: Իսկ եթե փորձես հանկարծ ձայն հանել, բողբոջել, կիտակի օծոված արտահայտությունը՝ տաքսիով գնացե՛ք: Իսկ ո՞վ է ասել, թե միայն տաքսիով պետք է երթեկնել: Քաղաքակիրթ երկրներում աշխատում են հանրային տրամադրող դարձնել հարմարավետ և էկոլոգիապես մաքուր՝ օգտագործելով արևի էներգիան, մագնիսականությունը, անգամ ծխախաղը... Իսկ նրան երկրում ճիշտ հակառակն է. փոխանակ տրամվայների և տրոլեյբուսների քանակն ավելացվելով՝ դրանք իսպառ վերացան՝ ասպարեզը թողնելով վնասակար գազեր արտաստող տրամադրող միջոցներից:

Ո՞վ է վերջապես պատասխան տալու ապագա սերնդի առողջության համար:

Երանի՜ նրանց, ովքեր մեր հասարակության մեջ կտեսնեն ձևավորված իրավական մշակույթ:

Սթափվե՛նք, հարգե՛նք և պաշտպանե՛նք մեր իրավունքներն ու արժանապատվությունը՝ հանում մարդկային և ազգային արժեքների և անվտանգության:

ՄԱՐԻՆԵ ՄԽԻՍԻՆՅԱՆ  
Երևանի թատրոնի և կինոյի պետ. ինստիտուտի դասախոս, դերասանուհի

### Գյուղական դուրսը

## դասարանակազմության և իրավունքի թնջուկում

Ընդ այն ժամանակ եկեալ Մետրոպոլ...  
և դպրոց կարգեաց յամենայն գաւառս:  
Պատմախոս



Հավարտ ուսումնական տարվա՝ դպրոցին համակուսում է այսպես կոչված գյուղակետավորման մտահոգությունը: Քանի՞ դասարան-միավոր պահելու թույլատրվում է ստանալու: Ինչպե՞ս ավելի շատ աշակերտներ ունենալ, որպեսզի, ինչ-որ թվաքանակ ապահովելով, կարելի լինի դասարան պահել: Ի դեպ, դասարանների քանակին համեմատ, սահմանվում են ուսմանավարի, բանվորի և այլ հաստիքներ: Դպրոցն իր հիմնարդի՝ մարզպետարանի և նախարարության հետ դիմակայում է կոմպլեկտավորման (ինձա՞ դասարանակազմության) արտառոց մարտահրավերին:

Ամենուրեք կան գյուղեր, որոնց տխուր համայնապատկերի խորախորհուրդ ուս-խոթությունը դպրոցահասակ մի քանի երեխաներն են: Ինչպե՞ս կազմակերպել նրանց ուսումնառությունը:

Հանրակրթության վարիչները, որոնց ուրբանիստական մտածելակերպում գյուղական ուսուցման վերաբերյալ հոգածությունը սակավ ու ժլատ է, չեն հանդուրժում, որ դասարանում լինեն 6-ից պակաս թվով աշակերտներ: Քաղաքային դպրոցի նկատմամբ գերակայության պատրանք ունենալով՝ ապշում են, թե ինչպե՞ս կարող է գյուղական դասարանում, ասենք, 3 աշակերտ լինել, երբ խոշոր բնակավայրերի դպրոցների դասարաններ են ճխտել 30-ական և ավելի թվով աշակերտներին:

Անգամ մատնացույց են անում օվկիանոսամերձ երկրներ, որտեղ դասարանի միջինը 50 կամ ավելի է: Թվում է՝ նույն դյուրությունը հայերիս կարելի է խորհուրդ տալ՝ զբաղվել, ասենք, փղարձուծությամբ...

3 և 30: Գիրավի, անտվոր է: Բանն այն է, որ ուսուցչական ռոճիկները և ուսումնառության ծավալները որոշվում են 45 րոպեանոց դասաժամերի քանակով: Եվ 3 աշակերտի, և 30 աշակերտի դեպքում դրանք նույնն են: Այս օրինակում թռչյալը 27 է, և որպես ծավալ է: Բայց այդպես է նաև 10, 15, 20, 30 թվով աշակերտի դեպքում, որը, չգիտես ինչու, տանելի է համարվում: Համառոտաբար այն ինչ քանակ սահմանած միջինը կապանք է՝ և այլ դպրոց... Մի՞թե հնարավոր չէ շրջանառել այլ սկզբունքներ ու մոտեցումներ:

Տարի առ տարի մեզանում դասարանակազմության խնդիրն ավելի ցցուն կերպարանք է առնում: Ամերկեայելի է, որ այն հիանալի կերպով մեջ սպրդած թյուրմեթոդներին և սովբրային երևույթների արտացոլիչն է: Այսպես, երկրի ֆինանսական վարիչների հետ համերաշխված՝ 49 նախարարությունը մի շարք գյուղական դպրոցներում փորձել ու տարածում է կեն դասարան, քանորդ դասարան ստվերային նորամտությունը: Սպասելի է, որ դասարանակազմության նկատմամբ կիրարկվեն նաև այլ կոտորակային թվեր: Ըստ այսմ՝ գյուղաքանակ աշակերտների դասը 22 րոպե 30 վայրկյան կամ 11 րոպե 15 վայրկյան է: Իսկ եթե տեօրենի հայեցողությամբ, հանուն աշակերտի իրավունքների, դասացուցակային դասը 45 րոպե է տևում, ուսմանարվում է ուսուցչի իրավունքը՝ դասաժամի համար նա վարձվում է 2 կամ 4 անգամ պակաս դրամի դիմաց:

Գործնականում, թերակազմ դասարանների առկայության դեպքում սովորաբար համատեղվում են տարբեր դասարանների աշակերտների դասերը, զորոհման՝ 2-րդ և 4-րդ դասարանցիները, նույն դասին ունկնդրելով ուսուցչին, կարող են «սովորել» հեքիաթ և բանաստեղծություն, գունարան և ուղղագրություն և այլն: Չավե՞շտ է, անհեթեթություն, թե՞

հանցանք... Եթե տարատարիք աշակերտների համատեղ ուսուցումն նախադիպրոցում է, հետևաբար, փորձառություն ունեցող անցյալի խորհրդային դպրոցի տարրական դասարաններում, ապա ներկայիս կրտսեր և միջին դպրոցի համար՝ կրթակարգի նորագույն պահանջների լույսի ներքո, հակացուցված է:

Անկա իրավիճակի փորձաքարը դասարանի միջին խտության երեխաների սխալ դրույթն է (հիմնական դպրոցում այն սահմանված է 25-30 աշակերտ), որը կապանք է դպրոցական համակարգը: Ստացվում է, որ կշտամբանքի են արժանի այն դպրոցները, որոնք ունեն 24 և պակաս թվով աշակերտներով դասարաններ (ուրբանիստական թե՛ ռուրալային):

Գյուղաքանակ անընկեր երեխան կամ ծակատագրորեն գյուղին զանված մի քանիսը, թերապիստական կազմի համար անհրաժեշտ է ծնանում այսպես կոչված կրթության ազգային ինստիտուտը (պետք է լինի՝ Հանրակրթության ազգային ինստիտուտ): Ցայժմ նա չի շրջանառել թերակազմ դպրոցների համապատասխան հրահանգ՝ դասի արդյունավետության ապահովման, ներառյալ կազմակերպության կազմակերպման, դասացուցակների կազմման, դասերի և դասամիջոցների ժամանցույցի, դասագրքային վարձարձարների և այլնի վերաբերյալ: Ի դեպ, բարձրաձայնելու է, որ նման հրահանգ պատրաստելն անհնար է առանց... իրավաբանականների:

«Միջիններ»-ով ղեկավարվելը մեր երկրի համար ժամանակավորակ է և հեռահար քաղաքական վտանգավորություն ունի: Ինչ խոսք, եվրոպաներում դա կարող է արդարացված լինել: Անտարակույս, եվրոպաներում պետք է գնալ սեփական արժեքների համար հավաստմամբ և ոչ՝ որպես միամիտ հետեվորդ: Եվրոպան յուրովի է լուծել գյուղի հարցը, իսկ մեզանում ազգային գարնդի վերելքն ու կայացումը տակավին խարսխվում են գյուղական սուրբստանգի վրա:

Ստահողիչ է, որ մեր նախարարությունում (ինձա՞ 49) վերջին տարիներին սկսել են ի դեռևս լինել «Գյուղական դպրոց», «Գյուղական ուսուցում», «Գյուղաքանակ ուսուցիչ» արտահայտությունները: Մինչդեռ, ըստ իս, պատշաճ է, որ գյուղական ուսուցմանը, որպես հայկականության առանձնահատկություն, օրենսդրորեն անդրադառնա մեր Ազգային ժողովը:

Ներքին և արտաքին պանդխտության միտումն աղետի պակասիվել է գյուղի վրա: Նախնի այլևս չի ասում՝ իմ քորիսա երեխին են անիրավ աշխարհը մի գցիլ, և ամեն գյուղ իր ծավալուն սփյուռքն ունի: Նոր ուսումնական տարուն դպրոց պիտի հաճախելին զոհված ազատամարտիկների զավակները... Այս և այլ պատճառներով Սյունիքի մարզում նոր ուստարակային լույսի տակ, կրճատվի 150 դասարան: Մարզի կրթահամակարգը եթե ոչ կաթածաճախար կլինի, կտկարանա մոտ 20 հիմնական կամ 15 միջնակարգ դպրոցի չափով:

(Հարուցակելի)

### ՈՐՈՇԵՐՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ-ԷՍԱՍՆԵՐԻ

Սյունիքի մարզի Լեռնաձորի հիմնական դպրոց

## ՊԱՏՎԻՐՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՄ ՅՈՒՑԱԳՈՐԾՆԵՐԻՆ՝ ՄԵԿ ԿՏՐԻՐ

Քաղաքապետն էլ, ինչպես շարքային քաղաքացիները, կարող է սխալներ թույլ տալ: Միայն թե՛ եթե վերջիններիս սխալներից կարող է ցավել սոսկ իրենց սեփական գլուխը, ապա քաղաքապետի սխալներից տուժում է ամբողջ համայնքը կամ բնակչության մի որոշակի հատված:

Եթե չլինե՞ր Էջմիածնի քաղաքապետ Գագիկ Ավագյանի որոշումը Մաշտոցի փող թիվ 6 շենքի դիմացի կանաչ գոտին նախկին ազատամարտիկ, ԵԿՄ անդամ Գագիկ Սկրտչյանի հատկացնելու մասին, բնակիչ-քաղաքապետ տարածայնությունը չէր խորանա այնքան, որ հասներ մինչև երկրի նախագահին:

Քաղաքապետի որոշումն իրավական տեսանկյունից հիմնադրվել է վերջինս, օգտվելով կառավարության թիվ 286 որոշումից, որը համայնքի ղեկավարին արտոնում է համայնքի սեփականություն հանդիսացող մինչև 20 քմ տարածքը մրցույթից դուրս հատկացնելու մասին միանձնյա որոշում ընդունել, հենց այդպես էլ վարվել է: Մաշտոցի 6 շենքից 3 մետր հեռավորության վրա գտնվող կանաչ գոտին՝ 19 քմ ընդհանուր մակերեսով, հատկացրել է Գ.Սկրտչյանին՝ 10 տարի պայմանագրային ժամկետով:

Իրավականորեն ճիշտ որոշումը, սակայն, հակասում է քաղաքի ճարտարապետա-շինարարական նորմերին: Ճարտարապետ Ռաշիդյանի նախագծած Կոմիտասի հրապարակն ու հրապարակամերձ տարածքը, որի մի մասն այլևս Գ.Սկրտչյանին է, տարիներ առաջնակարգում համար արժանացել է պետական մրցանակի: Հրապարակը, որ օղակված է վարչական շենքերով ու այգի-պուրակներով, այլ կառույց, առավել և՛ առևտրի օբյեկտ չի նախատեսում: Ավելին՝ այդպիսիք աղավաղում են դասական ճարտարապետությունն ու խաթարում հրապարակի դիմագիծը:

Որոշման պատճառով առաջացած հաջորդ խնդիրն առնչվում է Մաշտոց 6 շենքի բնակիչների ու շենքի 1-ին հարկուն տեղակալված առևտրի և սպասարկման օբյեկտների սեփականատերերին: Վերջիններս, որ բարեխիղճ հարկատուներ են, արդարացիորեն դժգոհում են, որ կառուցվող տաղավարը փակելու է իրենց օբյեկտների ճակատային մասը՝ օրկելով բնական լույսից: Բացի այդ՝ տարեկան կլորիկ գումար են մուծում տեղական բյուջե՝ իրենց ծառայությունների մասին ազդարարող գովազդային վահանակների համար, մինչդեռ 3 և ավելի մետր բարձրություն ունեցող տաղավարը փակելու է նաև գովազդային այդ վահանակները:

Բնակիչների բողոքն էլ իր հիմնավորումն ունի: Ասում են, որ 30 տարվա պուրակն, ցրել լույսի պես են պահել, տեղը տեղին խնամել, քրել, ծաղկեցրել են: Բացի այդ՝ նաև անհանգստանում են, որ քաղաքապետարանն անտեսել է հակաիրդեհային կանոնները: Ըստ քաղաքաշինության նորմերի՝ կառույցը բնակելի շենքի պատի ելուստային մասերից մկազագույնը պետք է 6 մ հեռավորություն ունենա: Իսկ քանի որ Էջմիածնից 9 բալանոց սեյսմիկ գոտում է, ապա այդ հեռավորությունը պետք է մեծացվի 20 տոկոսով՝ տվյալ դեպքում հասնելով 7,2 մետրի, մինչդեռ շենքից մինչև տաղավար հեռավորությունը չի գերազանցում 3 մետրը:

Այս բոլոր մանրամասները քաղաքապետին հայտնի դարձան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո միայն: Բայց ետքային արդեն սեփական սխալ ընդունելու պես մի բան էր դաժմալու: Ի՞նչ արած, վիճակն արդեն նետված է, մնում է՝ հետևանքներն անցավ լինել: Բայց՝ ոչ, տարածքի նոր տերը՝ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Գրիգորյանին զինակիցն ու հովանավորյալը, արդեն գործի է դրել շինարարական ողջ զինանոցը ու զինվորականների պաշտպանության ներքո ոչնչացնում է կանաչ տարածքն ու փորում շենքի հիմքը:

Եթե երկրի ղեկավարներն ուշադրության չարժանացնեն քաղաքի բնակիչների՝ իրենց ուղղված բողոքը, չի բացառվում, որ տարածքի շուրջ թե՛ծաղող միջադեպերն աստիճանաբար այլ ընթացք ստանան:

Գ. ԱՍՍԱՆՆ  
թ. Էջմիածնի



# Ապօրինաշինություն.

տարեկան բանի՞ միլիոն դրամի լրացուցիչ եկամտից է գրկվում երկիրը



**Ապօրինաշինությունը մեզանում նոր երևույթ չէ: Դեռևս խորհրդային իշխանության տարիներին այն տարածված էր նախկին ԽՍՀՄ բոլոր համրապետություններում, այդ թվում՝ նաև Հայաստանում:**  
Ո՞րն էր դրա պատճառը: Պետությունը չէր կարողանում ապահովել ազգաբնակչության բնակարանային օրավոր աճող պահանջարկը և, միաժամանակ, չէր խրախուսում անհատական բնակարանաշինությունը, ավելին, օրենսդրորեն (օրինակ՝ յուրաքանչյուր անձին ընկնող բնակավայրի խիստ ցածր նորմերը) ամեն կերպ խոչընդոտում էր դրա զարգացմանը:


Կարծում եմ՝ դա, առաջին հերթին, բխում էր ժամանակի քաղաքաշինության պահանջներից (առավելագույնս արդյունավետ օգտագործել հողատարածքները բազմաբնակարան շենքերի կառուցումով) և երկրորդ՝ քաղաքական նկատառումներից՝ կապիտալիստական աշխարհին ցույց տալ, որ խորհրդային երկրի քաղաքացու բնակարանային պահանջարկը ցածր պետությունը կարող է բավարարել ինքնուրույն: Հետագայում այս մտածելակերպից որոշակի հրաժարում եղավ, սկսվեց բազմաբնակարան կոոպերատիվ շենքերի շինարարությունը բնակիչների ֆինանսական օժանդակությամբ, բայց դա էլ բնակարանային խնդիրը վերջնականապես չկարողացավ լուծել: Ահա թե ինչու, անգամ այդ վարչահրամայական հզոր համակարգում մարդիկ դիմում էին օրինազանցության, առանց թույլտվության, ապօրինի կառուցում էին նոր առանձնատներ, ընդլայնում եղածը: Գիշտ է, օրինազանցները իշխանությունների հետ հաճախ խնդիրներ էին ունենում, բայց, այդուհանդերձ, ապօրինաշինությունը շարունակվում էր: Մեր քաղաքը և՛ նախկին Կիրովականը, այդ առումով ետ չէր մնում հանրապետության մյուս բնակավայրերից: Տարեցները լավ կիչին, թե ինչպես կառուցվեցին քիմիագործների թաղամասի հեռուստաաշտարակին մերձ սարավանդի, աղյուսագործների թաղամասի, Առափնյակի սարավանդերի, Դիմաց թաղամասի բազմաբնակարան մերձակա սարավանդի տները: Մեծ մասը, եթե չասենք՝ նշված և այլ թաղամասերն ամբողջությամբ, կառուցապատվեցին ապօրինի: Կարծում եմ՝ վաճառողի յուրաքանչյուր ընթերցող իր բնակավայրի օրինակով այս ցուցակը կարող է լրացնել:

Օրենքը՝ օրենք, բայց խորհրդային ղեկավարները հաճախ (հիարկե եթե այն չէր հակասում քաղաքաշինության նորմերին) այն էին փակում այս երևույթի դեմ. չէ՞ որ, վերջին հաշվով, մասամբ լուծվում էր տվյալ բնակավայրի բնակչության բնակարանային պահանջարկը բավարարման խնդիրը:

Ապօրինաշինությունը մեզանում նոր թափ ստացավ 1988թ. կործանարար երկրաշարժից հետո: Անօթևան մնացած մարդիկ, ովքեր քիչ թե շատ հնարավորություն ունեին, ԽՍՀՄ-ի փլուզումից և եղբայրական հանրապետություններից օգնության եկած շինարարների հետևանքով հետո, նոր բնակարան ստանալու հույսը կորցրած, սկսեցին իրենց ուժերով կացարաններ կառուցել՝ առանց թույլտվության, անգամ տեղի ընտրության հարցում առանց որոշակի նորմեր պահպանելու: Դրան հետևեց ուժևոր խափ ապօրինաշինության գրոհը: Նորանկախ Հայաստանի իշխանությունները այդ օրերին դեռևս ի գործ էին վերահսկելու ստեղծված իրավիճակը, փաստորեն, տիրում էր ամենաթուրության մթնոլորտ, և ժամանակին չհաջողվեց կանխել մեծածավալ ապօրինաշինության այդ հուժկու «գրոհը»: Եվ ի՞նչ ստացվեց: Այսօր համրապետությունում հաշվվում է շուրջ 290 հազար ինքնակամ կառույց կամ կցակառույց (սա մի քանի տարի առաջվա տվյալ է: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրից հրաժարվեցին մերկա ցուցանիշների վերաբերող տվյալներ հաղորդել):

Հարց է առաջանում. ի՞նչ անել այդ ինքնա-

կամ շինությունների հետ: Դեռևս 2002 թվականի դեկտեմբերի 26-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց ՀՀ օրենքը «*Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին*»: Օրենքի հոդված 1-ով սահմանված էին ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված, առանց օրենսդրական պահանջների պահպանման օտարված (տրանսֆորմացիոն) պետական կամ համայնքային սեփականություն համարվող հողամասերի նկատմամբ իրավունքների ճանաչման հիմքերը և կարգը:



Օրենքի երկտարյա և լրացուցիչ և վաճառայա ժամկետները լրանալուց հետո պարզ դարձավ, որ օրենքն աննշան չափով լուծեց այդ խնդիրը. ինքնակամ կառույցների թիվը հանրապետությունում գրեթե չի փոխվել:

Հարց է առաջանում ինչու՞ օրենքը չգործեց: Կարծում եմ, օրենքը, որքան էլ այն միտված էր քաղաքաշինության նորմերին չհակասող կառույցները օրինականացնելու, այնուամենայնիվ, չգործեց, որովհետև մշակված մեխանիզմները հնարավորություն չտվեցին ազգաբնակչությանը օգտվելու օրենքի ընձեռած հնարավորություններից. ինքնակամ զբաղեցրած հողամասերի և շինությունների օրինականացման համար օրենքով սահմանված էին այնպիսի բարձր գներ, որպիսի հնարավորություն մեր շարքային քաղաքացիները պարզապես չունեին: Փաստորեն, օրենքի ընձեռած հնարավորություններից կարողացան օգտվել միայն մեծահարուստները: Ի դեպ, օրենքի կիրարկման ժամանակները լրանալուց հետո այդ գները, կախված բնակավայրից, եռապատիկ, հնգապատիկ, տասնապատիկ աճել են: Այս ամենի հետևանքով համրապետությունում այսօր էլ շուրջ 290 հազար ինքնակամ կառույցներ և նրանցով զբաղեցված հողամասեր մնում են հարկային դաշտից դուրս: Եթե ընդունենք, որ դրանց գները կեսը առանձ-

նատներ են, նվազագույնը 600 քմ հողատարածքով, իսկ այդ կառույցներն ու կցակառույցները միջինը ունեն 100 քմ մակերես, ապա ստացվում է, որ տարեկան 9000 հա հողամաս և 29 մլն քմ բնակմակերես դուրս են մնում հարկային դաշտից: Այս գործի գիտակ պետական այրերին առաջարկում են հաշվել, թե երկիրը տարեկան *բանի՞ միլիոն դրամի լրացուցիչ եկամտից է գրկվում*:

Ո՞րն է ելքը: Մինչ այդ մասին խոսելը ուզում եմ հիշեցնել կրկին նախկին ԽՍՀՄ-ի փորձը. իշխանությունները գնացին փոխգիշուրմային լուծման. ապօրինի կառույցներին, որոնք չէին հակասում քաղաքաշինության նորմերին (հակասողները քանդվեցին), տրվեց ապօրինի կառույցի կարգավիճակ՝ տրվեցին *տնային գրքուկներ* (դրանց այսօր փոխարինում են անշարժ գույքի սեփականության վկայականները): Դրանով պետությունը լուծեց նախ՝ անձնագրային ռեժիմի հարցը (մարդիկ ունեցան հասցեներ և գրանցվեցին), երկրորդ՝ հարկային դաշտ բերվեցին և ապօրինի զավթված հողամասերը, և կառույցները: Եվ այդ ամենը, ի դեպ, կատարվեց անհատույց, առանց որևէ վճարի:

Ի՞նչ կարելի է անել այսօր: Կարծում եմ՝ կարելի է կիրառել նշված ուսանելի փորձը (հիշենք, թե ԱՄՆ-ի նախկին նախագահ Ֆ. Ռուզվելտը ինչպես էր հմտորեն կիրառում սոցիալիզմի փորձը՝ երկրի վերականգնման ու զարգացման համար): Առաջարկում են քաղաքաշինության նորմերին չհակասող ինքնակամ կառույցները և դրանցով զբաղեցված հողատարածքները խորհրդանշական գներով օրինականացնել և հարկային դաշտ ներգրավել: Ավելորդ չէ հիշեցնել, որ այդ ապօրինի շինությունների մի զգալի մասը անցած դարասկզբի (երևանք), 60-70-ական թվականների (Գյումրի, Վանաձոր և այլ բնակավայրեր) կառույցներ են: Կարծում եմ՝ օրինականացման գործընթացի ժամանակ կարելի է կիրառել երկակի չափորոշիչներ. եթե ինքնակամ կառույցը կամ զավթված հողատարածքը պատկանում է մեծահարուստի՝ նման դեպքերի համար մշակել վճարումների այլ սանդղակ: Լուծելով այս բարդ թցույցը՝ դրանով ամեն տարի պետական (կամ համայնքային) բյուջե կմուտքագրվեն լրացուցիչ միլիոնավոր դրամներ: Հակառակ պարագայում խնդիրը մշտապես կմնա առկա (բնակչության անվճարունակության պատճառով), որը օգուտ չի բերի ոչ պետությանը, ոչ ժողովրդին:

Հանրապետության վարչապետ պ-ն Սերժ Սարգսյանը, ով, ակնհայտ է, պաշտոնավարության հենց առաջին օրվանից ձեռնամուխ է եղել լուրջ բարեփոխումների, հուսով եմ, հատուկ ուշադրություն կդարձնի նաև այս հիմնախնդրի լուծմանը: Չէ՞ որ այն, առաջին հերթին, ուղղված է հանրապետության անվճարունակ խավի կյանքի բարելավմանը՝ խնդիր, որը դրված է մեր երկրի ռազմավարական ծրագրի հիմքում:

**ՋԱՆԻԲԵ ԳՈՒԿԱՍՅԱՆ**  
ք. Վանաձոր

# Հոգևոր

## ՎԱՐԱԳԱՎ ԿՆՏՆԵՐ ԽԱՉԻ ՊԱՏՄԱՆՈՒԹՅԱՆԸ

Եկեղեցական ավանդության համաձայն՝ սուրբ Գրիգորիան կույսերը, խուսափելով Դիոկղետիանոս (243-313թթ.) կայսեր հալածանքներից, Դոմնից փախչում են Հայաստան: Վասպուրական աշխարհում՝ Վանի հարավ-արևելյան կողմում, Վարագա լեռան լանջերին, նրանք գտնում են իրենց առաջին ապաստանը: Կույսերից սուրբ Գրիգորիան իր պարանոցին կրում էր Քրիստոսի խաչափայտից մի մասունք: Կլավդիոս կայսեր կինը՝ Պատրոնիկե թագուհին, այն ստացել էր Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Դակոթոս Տյառնեղբորից, երբ Պետրոս առաքյալի քարոզչությանը ուխտի էր գնացել Դոմն: Եվ քանի որ Գրիգորիան սերում էր կլավդիոս կայսեր տոհմից, խաչափայտի մասունքը ժառանգաբար փոխանցվել էր նրան:

Գրիգորիան կույսերը քրիստոնեական հավատքը քարոզելու համար Հայաստանում ենթարկվում են հալածանքների, ինչի պատճառով Գրիգորիան խաչափայտի մասունքը պահում է Վարագա լեռան քարայրներից մեկում:

Աստծո նախախնամությամբ Հայոց աշխարհում ավանդաբար գիտեին սուրբ Նշանի՝ Վարագա լեռան վրա պահվելու մասին, սակայն գտնվելու ստույգ վայրը հայտնի չէր:

653թ.-ին Վարագա լեռն իրենց ճգնության վայր են ընտրում թողնել ճգնավորն ու իր աշակերտ Դովեղը: Սուրբ Նշանը գտնելու փափագով նրանք խիստ ճգնախնամք՝ 12 օր ծոմ պահելով, արտասվելով և ջերմեռանդ աղոթքներով, Տիրոջից խնդրում են, որ իրենց արժանացնի տեսնելու և համբուրելու փափագելի Սուրբ Նշանը: Աստված տեսիլքով նրանց հայտնում է մասունքի տեղը: Այն ճգնավորներին երևում է խաչանիշ պայծառ լույսի տեսքով լուսեղեն՝ 12 այլուերի մեջտեղում, որոնցից բաժանվելով՝ բարձրանում է եկեղեցու սուրբ Սեղանին, որի առաջ

աղոթում էին ճգնավորները: Եվ ծայն է լսվում. «Քրիստոսը հաճեց բնակվել սուրբ Նշանի մեջ՝ Հայոց աշխարհի պահպանության և փրկության համար»:  
Լուսեղեն այլուերը 12 օր երևում են Վարագա



լեռան Գալիլիա կղզվող զագաթին այնպես, որ հեռավոր վայրերից տեսանելի էին: Հոգևորականներն ու աշխարհականները մեծ թափուրով Հայոց Ներսես Գ Տայեցի (641-661թթ.) կաթողիկոսի և Վարդ Ռշտունի պապարայետի հետ գալիս են Վարագա՝ սուրբ Նշանին երկրպագելու, և մեծահանդես տոնախմբու-

յուն կատարում: Ներսես հայրապետը, ի հիշատակ Վարագա սուրբ Խաչի երևանքի հրաշքի, տոն է սահմանում և 12 լուսե այլուերի երևալու վայրում եկեղեցի կառուցում, իսկ եկեղեցին, որտեղ իջել էր Սուրբ Նշանը, մեծացնում է և ավելի փառավոր դարձնում: Այս առիթով գրվում է «Նշանա անենա-յաթը խաչիւղ Քով Քրիստոս» շարականը, և մինչև Վարագա սուրբ Խաչի տոնը սահմանվում հնգօրյա շաբաթապահք, որը ժողովրդական լեզվով կոչվում է՝ «վանեցիների»: Մասունքի հրաշագործությունների մասին բազում վկայություններ են պահպանվել: Հիշատակելի է Եղեմիայում բռնկված համաճարակի ժամանակ մասունքը գործությամբ անբուժելի հիվանդության կասեցումը:

Վարագա լեռան զագաթին և ստորոտում հիմնվել են Վերին և Ներքին եկեղեցիները, որոնցից առավել հայտնի է Ներքին Վարագավանքն է, ուր և պահվել է խաչափայտի մասունքը: Այն մինչև 1021թ. մնացել է Վարագում, իսկ երբ Սենեբերիմ Արծրունին Վասպուրականի թագավորությունը թողնում է և տեղափոխվում Սեբաստիա, տանում է նաև Սբ. Նշանը: Սակայն 1026թ. սրբազան մասունքը վերադարձվում է իր նախնական վայրը: XI դարում Աշոտ Գ Բագրատունին Սուրբ Նշանի համար 30000 դահեկան արժողությամբ ոսկե մասնատուփ է պատվիրում: 1237թ.-ին այն տեղափոխվում է Նոր Վարագավանք, իսկ 1655 թ.-ին դրվում է Վանի Սբ. Տիրամայր եկեղեցու, որի համար և կոչվում է Սուրբ Նշան:


Մեծ եղեռնից հետո սուրբ մասունքի գտնվելու վայրը հայտնի չէ:

**Գուգարաց թեմի քրիստոնեական դատարարության կենտրոն**

## Օ á ě ĩ Ç³ Ĩ á ð Û ě Ç · · օ í Ě³ ě Ç á ě Ç Û³ ě Ç Ÿ

Մարտիանոս կրապաշտ կայսեր իշխանության տարիներին քրիստոնյա ծնողներից սերած Փոստիա անունով սրբուհիին ապրում էր Կիզիկո քաղաքում: Նա զգոն և պարկեշտ էր, մշտապես աղոթքի և պահեքի մեջ, նախանձախնդիր էր Աստծո պատվիրանների հանդեպ և հայտնապես պաշտում էր Քրիստոս Աստծուն: Նա քարոզում էր և շատ ամհավատների դարձի բերում դեպի ճշմարիտ աստվածապաշտությունը:

Թագավորը լուսն է Փոստիա կույսի մասին և Կիզիկո քաղաք ուղարկում էվկասիոս նախարարին՝



ի ր ա մ ա յ է լ ո Վ ի ն ր ա ն, որ եթե Փոստիան Քրիստոսին ուրանա, նրան պատվի արժանացնի, եթե ոչ՝ խեղդի ծովում: Եվկասիոսը, գալով Կիզիկոն, նստում է ատյանում և իր մոտ կանչում կույսին: Երբ վերջինս գալիս է, նախարարն սկսում է համոզել, որ ուրանա Քրիստոսին և պաշտի կուռքերին: Սակայն կույսը պատասխանում է. «Կույր և խուլ, համը ու անզգա չաստվածներից ես չեմ պաշտում, որովհետև երկնքում ունեն Աստված ամենն արարող Հորը, Իր Բանին համազո և միածին Հիսուս Քրիստոսին և ճշմարիտ Սուրբ Հոգուն»: Եվկասիոս նախարարն սկսում է սպառնալ, իսկ Փոստիա կույսն ասում է. «Ի՞նչ երեխայի տեղ մի՞ դիր, թեև հասակով փոքր եմ, սակայն հոգով և մտքով կատարյալ եմ ի Քրիստոս»: Եվկասիոսը բարկանալով՝ հրամայում է իբրև նախատիքը ածիլել սրբուհու գլուխը, կախել նրան ու բրեթով հարվածել: Երբ

սկսում են նրան կտտանքների ենթարկել, հանկարծ երկնքից կայծակ է ճայրում և սրբուհու տանջանքներից հանդիսառես ամբողջից շատերին մոխրացնում: Եվկասիոսը շատ է վախեցնում և դիմում է կույսին. «Պատմիր ի՞նչ քո մասին. տեսնում եմ, որ կախարհություններ են անում և չես նվազում, թուլանում տանջանքներից»: Փոստիա կույսը պատասխանում է. «Ի՞նչպես որ մարդու նկարած պատկերը չի զգում տանջանքներ, նույնպես և իմ մարմինը չի վշտանում չարչարանքներից, որովհետև իմ հոգին հաստատում է առ Աստված»: Այնուհետև Եվկասիոսը հրամայում է, որ սողցեն կույսին, սակայն դահիճներին չի հաջողվում վնասել Քրիստոսի վկային: Նրան զգում են կրակի մեջ, սակայն Փոստիա կույսն այս անգամ և անվնաս է մնում: Եվկասիոսն ասում է. «Շատ եմ զարմանում քո գործերից, ով աղջիկ»: Եվ սուրբ կույսն սկսում է պատմել նրան Քրիստոսի վարդապետության մասին: Եվկասիոսը, սրբուհու շուրթերից լսելով բարի ավետումը, դարձի է գալիս և ազատում նրան տանջանքներից:

Եվկասիոսի ծառաներից մեկը թագավորին լուր է տանում կատարվածի մասին: Թագավորն այս անգամ փոխարքային է ուղարկում Կիզիկո: Վերջինս ժամանելով՝ կանչում է Եվկասիոսին ու բարկացած գոչում. «Չարագլուխ, ինչպե՞ս համարձակվեցիր ուրանալ մեր կուռքերին և դառնալ քրիստոնյա»: Եվկասիոսը պատասխանում է. «Եթե դու էլ լսես Քրիստոսի Փոստիա աղախնին, ամնիջապես կճանաչես կենդանի Աստծուն և ի՞նչ մնաս երանելի կլինես»: Փոխարքան բարկանալով՝ հրամայում է կախել նրան և սրով քերել նրա մարմինը, այս կատարվել այն վերջերը: Եվկասիոսն, աչքերը երկից ուղղելով, արդյուն է Աստծուն իր տանջանքները թեթևացնել: Փոստիան, տեսնելով Եվկասիոսի հավատարմությունն ու հավատքն առ Աստված, գոհանում է Տիրոջից և աղոթում նրա համար: Փոխարքան իր մոտ է կանչում Փոստիա կույսին ասելով. «Ո՛վ փոքրիկ չարագլուխ, ինչպե՞ս համարձակվեցիր թագավորի մեծ իշխանին և աստվածների քահանային հեռացնել մեզից և քո

հավատքին դարձնել»: Փոստիան պատասխանում է. «Հույսս Աստծուց է: Նա քեզ ևս, ինչպես Եվկասիոսին, որ ճշմարիտ գիտությանն է կանչում»: Իշխանն ասում է. «Ի՞նչ մի համեմատիր Եվկասիոսի մտքը: Եվ հրամայում է կախել նրան: Բայց կույսը նորից անվնաս է մնում Քրիստոսի շնորհով: Փոխարքան, իր ուզածին չհասնելով, հրամայում է երանելիին զցել գիշատիչ զազանների մոտ, սակայն զազանները չեն վնասում, այլ խոնարհվում և լիզում են սրբուհու ոտքերը: Այնուհետև փոխարքան հրամայում է կույսին և Եվկասիոսին զցել եռացող ձեթով ամանի մեջ: Սուրբ կույսի աղոթքի շնորհիվ կրակը հանգչում է, և ձեթը պաղում: Փոխարքան, տեսնելով այս զարմանալի սքանչելիքները, բարձրաձայն աղաղակում է ու ասում. «Աստված մեր և Տեր մեր Հիսուս Քրիստոս, որ Եվկասիոսին Փոստիայի շնորհով ճշմարտության բերեցիր, ի՞նչ ևս դասիր նրանց շարք և մի՛ բարկացիր, Տեր իմ, իմ գործած չարիքների համար»: Այդ ժամանակ երկնքից ծայն է լսվում, և պայծառ լույս ծագում: Սրա հետ փոխարքան ավելի է ուրախանում և ավելի հաստատվում հավատքի մեջ՝ ասելով. «Ամոնախալ Տեր, ի՞նչ ևս ընդունիր սրբերիդ մեջ»: Եվ մոտենալով ամանին՝ իր վրա դրոշմում է Սուրբ Խաչի նշանն ու «Հանուն Հոր, Սուրբ Հոգու և Որդու» ասելով՝ միանում է սրբերին՝ մտնելով ամանի մեջ: Այդ ժամանակ Փոստիան ուրախանալով՝ ասում է. «Գոհանում եմ քեզից, Քրիստոս, որ լսեցիր քո աղախնին և ի՞նչ դարձրիր պողպատը տուճկ պարտեզիդ մեջ»: Այդժամ երկնքից դարձյալ ծայն է լսվում. «Ի՞նչ մոտ եկե՛ք և հաճախե՛ք բազում չարչարանքներից և վայելե՛քք հավիտենական ուրախությունը՝ սրբերի և Իմ փրկիչների հետ»: Եվ լսելով այս ծայնը՝ նրանք երանության մեջ ավանդում են հոգիներն առ Աստված:

Գրաբարից փոխարքեպ  
ԽՈՐԵՆ ՍՐԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Ու Շ Ա Դ Բ Ու Յ Յ Ու Ն

Մարդու իրավունքների հայկական դպրոց

2008 թ. հունվարի 10-30

ԴԻՍՈՒՄ-ՀԱՐՑԱԾԵՂՈՒԹՅՈՒՆ



Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի (ՀՍԻԿ) Մարդու իրավունքների հայկական դպրոցը...

Դասընթացի նպատակը իրավական առարկաների «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք»...

Գպրոցը հաջողությամբ ավարտելու դեպքում սովորողն ստանում է վկայական իրավական առարկաների մասնագետի որակավորմամբ:

Պիմել կառուցել

- Հանրակրթական դպրոցի այն ուսուցիչները, ովքեր:
- դասավանդում են «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք»...

- ՀՍԻԿ-ը հոգում է հետևյալ ծախսերը:
1. բնակավայր — Վանաձոր, Վանաձոր — բնակավայր ուղեվարձերը (վճարման համար հիմք են հանդիսանում ուղեկտրոնները),
2. սնունդ,
3. կացարան:

- Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը:
- Դիմում-հարցաթերթիկ,
- Ուսումնական հաստատության ղեկավարի կողմից տրված հարցաթերթիկ-երաշխավորագիր,
- Ինքնակենսագրություն (CV),
- Բուհի դիմումի պատճեն,
- Հարակից այլ դասընթացների (սեմինարների) մասնակցության վկայականների պատճեններ (եթե կան),
- Ամենագրի պատճեն,
- 3/4 չափի մեկ լուսանկար (Ֆաքսով և էլ.փոստով ուղարկված լուսանկարներ չեն ընդունվում):

Փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում դիմումը չի քննարկվում: Դիմում-հարցաթերթիկը և հարցաթերթիկ-երաշխավորագիրը կարելի է ստանալ www.acrpc.am ինտերնետային էջից կամ ՀՍԻԿ գրասենյակից:

- 1. Ազգանուն, անուն, հայրանուն
2. Ծննդյան օրը, ամիսը, օրը
3. Հասցե
4. Հեռախոս, ֆաքս
էլ. հասցե
5. Կրթությունը
Ավարտման տարեթիվը
6. Աշխատակայի լրիվ անվանումը, հասցեն (մարզը, համայնքը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. հասցեն.
7. Նախկինում իրավական ոլորտի ի՞նչ դասընթացների, սեմինարների եք մասնակցել
8. Ի՞նչու՞ եք դիմում: Ի՞նչ եք ակնկալում Մարդու իրավունքների հայկական դպրոցից (շարադրել հանգամանորեն, ամիսաշտաբային դեպքում՝ ավելացնելով լրացուցիչ թերթ)
9. Իրավական ոլորտի ի՞նչ հարցեր են Ձեզ առավելապես հետաքրքրում
10. Ձեր պատկերացմամբ՝
ա) Ի՞նչու՞ է անհրաժեշտ մարդու իրավունքների կրթությունը
բ) Ո՞րն է քաղաքացիական հասարակության մեջ անհատի դերը
գ) Ի՞նչպիսի՞ հարաբերակցություն եք տեսնում մարդու իրավունքների և նրա պարտականությունների միջև
Անհրաժեշտ է ձեր ընտրությամբ վերոհիշյալ կետերից մեկի վերաբերյալ ներկայացնել մինչև կես էջ ծավալով շարադրություն (տես):
11. Ի՞նչ հանգամանքներ կարող են խոչընդոտել մեկամյա դասընթացին Ձեր կանոնավոր հաճախմանը
12. Ունե՞ք արդյոք որևէ առանձնահատուկ (օրինակ՝ կենցաղային, առողջական և այլն) կարիք կամ պայման, որոնք կցանկանայիք, որ հաշվի առնվեին Ձեր ուսման ընթացքում:

Տարի, ամիս, ամսաթիվ տտրագրություն

Ծանոթություն:
Դիմելու համար անհրաժեշտ է լրացնել դիմում-հարցաթերթիկ, ներկայացնել ինքնակենսագրություն (CV), հարցաթերթիկ-երաշխավորագիր ուսումնական հաստատության ղեկավարի կողմից, դիմումի պատճեն և մեկ լուսանկար: Փաստաթղթերը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան մինչև 2007թ. նոյեմբերի 23-ը, հետևյալ հասցեով՝
Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Շիրակացու I նրբանցք, թիվ 2
Պոստառ՝ (322) 22867, 44781 Ֆաքս՝ (322) 44781
էլ.փոստ՝ acrpc@acrpc.am, arapikyan@acrpc.am
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել կրթության բաժնի վարիչ Արայիկ Դավիթյանին՝ arapikyan@acrpc.am

Հարգելի՛ ընթերցող, եթե ցանկանում եք Ձեր դիտարկումներով օգնել «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթի առավել արդյունավետ ու նպատակային աշխատանքին, խնդրում ենք լրացնել սույն ձևաթերթիկը և ուղարկել խմբագրություն: Ձեզից ընդամենը պահանջվում է լինել անաչառ և արագ արձագանքել: Կանխավ շնորհակալ ենք:

- 1. Ըստ Ձեզ՝ մեր հասարակության մեջ զարգացած է իրավական մշակույթը:
 Ոչ
 Մասամբ
 Այո
2. Հասարակությունն իրազեկ է իր իրավունքներին:
 Ոչ
 Մասամբ
 Այո
3. Թերթը խրախուսում է մարդու իրավունքների պաշտպանությունը:
 Չի խրախուսում
 Մասամբ
 Խրախուսում է
4. Թերթն արժարժուն է հասարակությանը հուզող հարցեր:
 Ոչ
 Մասամբ
 Այո
5. Ի՞նչ թեմաների շուրջ հոդվածներ կցանկանայիք կարդալ մեր թերթի էջերում:
Կարող եք լրացնել նաև Ձեր տվյալները՝ անուն, ազգանուն, հասցե, հեռախոս, էլ. փոստ

Սիրելի՛ ընթերցող, լրացված ձևաթերթիկը խնդրում ենք ուղարկել ՀՍԻԿ գրասենյակ՝ ԳԳ, Լոռու մարզ, Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ, թիվ 2 հասցեով, մինչև 2007թ. դեկտեմբերի 31-ը: Կարելի է պատասխաններն ուղարկել նաև էլ փոստով՝ acrpc@acrpc.am կամ ֆաքսով՝ +374(322) 4-47-81:

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության 9 տարի
Չինականի և հրատարակիչ
Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ԳԳ, 2002 թ. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-87
Ֆաքս՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am, ic@acrpc.am
Հասցեացուցիչ էջ՝ www.acrpc.am
Գլխավոր խմբագրի պաշտոնակատար՝ Գևորգ Մամուկյան
Խմբագիր՝ Գևել Հակոբյան
Համակարգչային ձևավորող՝ Արմեն Սահակյան
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Հրատարակումների թվայնականությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 2007թ.09.30:
Տպաքանակը՝ 2000:
Տպագրվել է «Չանգակ-97» հրատարակչատանը:
Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура
Տարածվում է անվճար